ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ («ՀՀԿ» ՊՈԱԿ)

MINISTRY OF TRANSPORT AND COMMUNICATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA
"REPUBLICAN CENTRE OF TELECOMMUNICATIONS"
STATE NON COMMERCIAL ORGANIZATION

0091,ք.Երևան, Թբիլիսյան խճուղի, 29
Հեռ.՝ (37410)28-87-17
Հեռ./ֆաքս՝ (37410) 28-86-83

29, Tbilisian Highway, Yerevan,0091,RA
Tel.: (37410) 28-87-17
Tel/Fax: (37410) 28-86-83

N 87

2015 02 «18»

<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/6>> **ծածկագրով կազմակերպված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին**
**carayutyun-11-6@shh.gnumner.am**

Հարգելի մասնակից՝

<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/6>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ <<ՀՀԿ>> ՊՈԱԿ/ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայություններ:

Սույն հրավերի /ծանուցման/ ծածկագիր է հանդիսանում <<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Թբիլիսյան խճ. 29 սենյակ 16 հասցեով, մինչև 2015 թ. մարտի 02-ը ժամը 10:00-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ա. Չերքեզյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում, ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի վարչական շենքում, Թբիլիսյան խճ. 29 հասցեով, N 1 սենյակում, 2015թ.-ի մարտի 02-ին, ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակման և սպասարկման ծառայությունների ձեռքբերումը:

<<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակման և սպասարկման ծառայությունների /որը կազմված է՝ 1 չափաբաժնից/ տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի /ծանուցման/ N 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա/ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /Հավելված 1/, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ/ գնային առաջարկ /Հավելված 2/: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք /որը ներառում է ինքնարժեք և շահույթ/ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներով բաղկացած հաշվարկի ձևով:

Մասնակիցները կարող են Ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումն իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/6>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ rct-gnumner.cherkezyan@yandex.ru:

**Հարգանքով՝**

**Գլխավոր տնօրեն** **Ա. Վերդյան**

**Կատարող՝**
**Ա. Չերքեզյան**
**Հեռ՝ 010-28-47-87**
**rct-gnumner.cherkezyan@yandex.ru**

*Հավելված 3*
*<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>>ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ
# N <<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>>

ք. Երևան <<___>> _____ 2015թ.

<<Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն>> ՊՈԱԿ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Վերդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ----------ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***ծրագրավորման ծառայությունների*** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է _____ (____տառերով_____ ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N2 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պ ա տ վ ի ր ա տ ու | Կ ա տ ա ր ո ղ |
|---|---|
| <<----------->> ՊՈԱԿ | <<----------->> |
| **ք. Երևան,----------** | **ք. Երևան,----------** |
| <<----------բանկ>> | <<----------բանկ>> |
| Հ/Հ՝ ---------- | Հ/Հ՝---------- |
| ՀՎՀՀ՝---------- | ՀՎՀՀ՝ ---------- |
| ---------- | ---------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 1*
*<<_____>> _____ 2015 թ. կնքված*
*<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>> ծածկագրով*
*գնման պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| ծառայության | | |
|---|---|---|
| Հ/Հ | Անվանումը | մատուցման համառոտ նկարագիրը |
| 1 | Ծրագրավորման ծառայություններ | <<Միջազգային չափորոշիչներին համապատասխանող 3կՀց-3000ԳՀց ռադիոհաճախականությունների շերտում որոնողատեղեկատվական ծրագրային համակարգ>>-ի ստեղծում և տեղադրում: Ծրագրային համակարգի տեխնիկական բնութագիրը ներկայացված է N 1.1 հավելվածում /կցվում է/: |

| մատուցման ժամկետը | |
|---|---|
| սկիզբը | ավարտը |
| 01.04.2015թ. | 06.07.2015թ. |

* N1.1 հավելվածը կցվում է

**Պ ա տ վ ի ր ա տ ու**

<<----------->> ՊՈԱԿ
**ք. Երևան,----------**
<<----------բանկ>>
Հ/Հ՝ ----------
ՀՎՀՀ՝----------

---
(ստորագրություն)
**Կ.Տ.**

**Կ ա տ ա ր ո ղ**

<<----------->>
**ք. Երևան,----------**
<<----------բանկ>>
Հ/Հ՝----------
ՀՎՀՀ՝ ----------

---
(ստորագրություն)
**Կ.Տ.**

*Հավելված 1.1*
*<<_____>> _____ 2015 թ. կնքված*
*<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>> ծածկագրով*
*գնման պայմանագրի Հավելված 1-ի*

**Միջազգային չափորոշիչներին համապատասխանող 3 կՀց - 3000 ԳՀց ռադիոհաճախականությունների շերտում որոնողատեղեկատվական ծրագրային համակարգ**

## 1. Որոնողատեղեկատվական համակարգի նշանակում

**1.1 Միասնական որոնողատեղեկատվական համակարգն** անհրաժեշտ է հետևյալ խնդիրների լուծման համար՝

- համեմատություն հաճախականությունների միջազգային և ազգային էլեկտրոնային աղյուսակների միջև,
- ստեղծել կապ վերոնշյալ աղյուսակների և տվյալների շտեմարանում գործող ծառայությունների միջև (ֆիքսված, շարժական, բջջային, ռադիոհեռարձակման, արբանյակային և այլ ծառայություններ)՝ ըստ հաճախականությունների և անհամապատասխանությունները արտապատկերվի վերջնական արդյունքներում,
- համակարգը պետք է ապահովի արդյունքների հաշվետվությունը ելքային ֆայլի տեսքով՝ EXCEL ծրագրի ֆայլի ձևաչափով,
- յուրաքանչյուր ծառայությունում պետք է երևա գրանցումների ընդհանուր քանակը,
- ցանկացած ծառայություն պետք է ունենա նոր գրանցում ավելացնելու, հարկ եղած դեպքում գոյություն ունեցող գրանցումը ջնջելու կամ վերջինիս մեջ փոփոխություն կատարելու հնարավորություն,
- անհրաժեշտ է ցանկացած ծառայությունում պահանջվող տվյալների ընտրության կատարում,
- պետք է հնարավոր լինի տվյալների ներմուծումը և արտացոլումը կատարել երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն,
- ՀՀԿ ՊՈԱԿ-ի ցանկացած ստորաբաժանումից համակարգի մուտք գործելու հնարավորություն՝ օգտվողի և ադմինիստրատորի իրավունքներով;
- պետք է հնարավոր լինի ավտոմատ կերպով ստեղծել տվյալների բազայի պահեստային պատճե՝ մեկ շաբաթվա կտրվածքով:
- նոր մշակվող համակարգն իր մեջ պետք է ներառի տեղեկատվության անընդմեջ նորացման (թարմացման) հնարավորություն՝ ՀՀԿ ՊՈԱԿ-ին հասանելի տեղեկատվության մուտքագրում,
- համակարգի հնարավորությունների մեջ պետք է ընդգրկվի ավտոմատացման եղանակով ՀՄՄ-ից լազերային սկավառակի տեսքով ստացվող BRIFIC-ի՝ Հայաստանի

Կապի Ադմինիստրացիային վերաբերող հայտերի տրման և գրանցման տեղեկատվության լրացում՝ աղյուսակի տեսքով:

## 2. Տեղեկատվական ելակետային աղբյուրներն են՝

**2.1.** Վերգետնյա ռադիոծառայությունների գծով միջազգային տեղեկատվական հաճախականային ռեգիստրը՝ (brific.db3 բազան սկավառակի վրա), որոնք պարունակվում են միջազգային հաճախականային ինֆորմացիոն շրջաբերականներում,

**2.2.** Ռադիոռեգլամենտում առկա հաճախականությունների միջազգային աղյուսակը և ՀՀ հաճախականությունների ազգային աղյուսակը,

**2.3.** ստորև ներկայացված տարբեր ծառայությունների համար անհրաժեշտ դաշտերի անվանումները (աղյուսակ 1).

**Աղյուսակ 1**

| BRIFIC .db3 | |
|---|---|
| 1. | ՀՄՄ-ի կողմից հատկացված նույնականացման համար |
| 2. | Ֆրագմենտ |
| 3. | Ադմինիստրացիա |
| 4. | Եզակի նույնականացման համար՝ տրված Ադմինիստրացիայի կողմից |
| 5. | Ստացման ամսաթիվը |
| 6. | Հատկացված հաճախականությունը |
| 7. | Աշխարհագրական կոորդինատները |
| 8. | Նպատակը |
| 9. | Աշխարհագրական տարածքը |
| 10. | Կայանի դասը |
| 11. | Անվանումը |
| 12. | Ճառագայթման դասը |
| 13. | Ստանդարտ/Նշանակման տարածքը |
| 14. | Հաճախականության շերտի կոդը |
| 15. | Գործողության սովորական ժամերը |
| 16. | Կապուղու համարը |
| 17. | Ազդանշ |

**Պ ա տ վ ի ր ա տ ու**

<<----------->> ՊՈԱԿ
ք. Երևան,----------
<<----------բանկ>>
Հ/Հ՝ ----------
ՀՎՀՀ՝----------

---
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ ա տ ա ր ո ղ**

<<----------->>
ք. Երևան,----------
<<----------բանկ>>
Հ/Հ՝----------
ՀՎՀՀ՝ ----------

---
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
<<_____ >>_____2015թ.կնքված
<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>> *ծածկագրով*
*գնման պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2015 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Ծրագրավորման ծառայություններ | - | - | - | 50 % | 50 % | 50 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | **100 %** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

**Պ ա տ վ ի ր ա տ ու**

**<<----------->> ՊՈԱԿ**
**ք. Երևան,----------**
**<<----------բանկ>>**
**Հ/Հ՝ ----------**
**ՀՎՀՀ՝----------**

**----------**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

**Կ ա տ ա ր ո ղ**

**<<----------->>**
**ք. Երևան,----------**
**<<----------բանկ>>**
**Հ/Հ՝----------**
**ՀՎՀՀ՝ ----------**

**----------**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

*Հավելված 3*
*<<_____>> _____ 2015 թ. կնքված*
*<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>> ծածկագրով*
*գնման պայմանագրի*

| Կատարող | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝ <<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>>

Պատվիրատուն՝ ի դեմս <<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի ռադիոկապի կարգավորման վարչության պետ՝ Ս. Հարությունյանի, և Կատարողը՝ ի դեմս_____ նը, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Ծառայությունը.

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| Ազգանուն, Անուն | Ազգանուն, Անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 1*
*<<ԳԱԿ- ՇՀԾՁԲ-11/6>> ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*
*<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>>ծածկագրով*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

# Դ Ի Մ Ո Ւ Մ
## ը ն թ ա ց ա կ ա ր գ ի ն մ ա ս ն ա կ ց ե լ ու

_____հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Պատվիրատուի անվանումը>>-ի կողմից *<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>>* ծածկագրով հայտարարված ընթացակարգի ..... չափաբաժնին (չափաբաժիններին) և
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ <<Մասնակցի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

էլեկտրոնային փոստի հասցե>>:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված 2*
*<<ԳԱԿ- ՇՀԾԶԲ-11/6>> ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*
*<<ՇՀԾԶԲ-11/6-ՀՀԿ-15/11>>ծածկագրով*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

# Գ ն ի  ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված <<ՇՀԾԶԲ-11/6-ՀՀԿ-15/11>> ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,
_____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

**(ՀՀ դրամ)**

| Չափա-բաժինների համարները | Ծառայության անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | Ծրագրավորման ծառայություններ | | | |

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:**
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված 4*
*<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>>ծածկագրով*
ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N ----------

ք. Երևան <<_____>> _____20 թ.

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

## *1. Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Գնման առարկայի անվանումը>> ձեռքբերման <<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում: Սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագիրը Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված <<Գնման առարկայի անվանումը>> ձեռքբերման N <<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>> գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու, կատարումից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ----------թվերով---------- (----------տառերով----------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>>-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Պատվիրատուի անվանումը>> առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

## *2. Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև **2015 թ. դեկտեմբերի 30 -ը ներառյալ:**

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<<Մասնակցի անվանումը>>

<<Մասնակցի հասցեն>>

<<Մասնակցի բանկի անվանումը>>

<<

<<

տնօրեն՝ ----------
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ----------
(ստորագրություն)

Կ.Տ

*Հավելված 5*
*<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-15/11>> ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*

# ԵՐԱՇԽԻՔ

ք. Երևան <<_____>> _____ 2015թ.

Ընդունելով ի գիտություն, որ _____-ի /այսուհետև՝ Բենեֆիցիար/ և _____-ի /այսուհետև՝ Պրինցիպալ/ միջև _____ N _____ գնման պայմանագիր /այսուհետև՝ Պայմանագիր/ կնքելու համար Պրինցիպալը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում _____ ՀՀ դրամ գումարի չափով /այսուհետև՝ երաշխիքային գումար/, _____ /այսուհետև՝ երաշխավոր/ ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալ որպես Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների /ժառանգների/ Երաշխավոր և Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների /ժառանգների/ հետ համապարտ պարտապան, ի ապահովումն Պրինցիպալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման:

Պրինցիպալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, Պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում Երաշխավորը պարտավորվում է անհապաղ վճարել Բենեֆիցիարին պահանջված գումարը, ինչպես նաև իրավունք է վերապահում Բենեֆիցիարի, առանց Երաշխավորին նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով գանձել համապատասխան գումար, երաշխիքային գումարի սահմաններում, Երաշխավորի ՀՀ Կենտրոնական բանկում կամ Երաշխավորի ցանկացած թղթակից բանկում բացված՝ Երաշխավորի ցանկացած այլ հաշվից:

Սույնով Երաշխավորը հանձնարարում է ՀՀ Կենտրոնական բանկին, իր բոլոր թղթակից, ինչպես նաև սպասարկող բանկերին պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում Բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով Երաշխավորի թղթակցային և/կամ/ այլ հաշիվներից անվիճելի կարգով գանձել պահանջվող գումարը:

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխավորի կողմից:

Սույն երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև _____:

Բանկի վարչության նախագահ՝ _____ Կ.Տ.
Գլխավոր հաշվապահ՝ _____